

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՕՀԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ ԱՐՄԵՆԻ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային
(կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային,
սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ОГАНЯН ДАВИТ АРМЕНОВИЧ

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ТОЛКОВАНИЯ ГРАЖДАНСКО-
ПРАВОВОГО ДОГОВОРА**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических
наук по специальности 12.00.03 – Частное право (гражданское,
коммерческое, международное частное, семейное, трудовое,
социальное обеспечение)**

Ереван-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Դ. Ավետիսյան


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Մ. Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ն. Ա. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ արդարադատության ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի նոյեմբերի 23-ին՝ ժամը 16⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. հոկտեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ.  Ս. Տ. Սուջյան
քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Тема диссертации утверждена в

Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических
наук, профессор Д. В. Аветисян

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор А. М. Айкянц
кандидат юридических
наук, доцент Н.А. Карапетян

Ведущая организация: Академия юстиции РА

Защита состоится 23-ого ноября 2021 г. в 16⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 12-ого октября 2021 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

Т. О. Суджян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պայմանագրի դերի բարձրացմամբ բարձրանում է նաև պայմանագրային իրավունքի առանձին ինստիտուտների նշանակությունը, որոնցից մեկն է հանդիսանում նաև քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանումը: Պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի արմատները տանում են դեպի փիլիսոփայական հերմենևտիկա, մասնավորապես՝ իրավաբանական հերմենևտիկա: Ամենևին չժխտելով այս ինստիտուտի հերմենևտիկական ծագումնաբանությունը՝ կարծում ենք, որ դրա ուսումնասիրությունը մասնավոր-իրավական հարթության մեջ արդարացված է և ինքնուրույն գոյության իրավունք ունի: Վերջիվերջո, մեկնաբանման ինստիտուտի բովանդակությունը մեծամասամբ կախված է նրանից, թե հատկապես ինչն է հանդիսանում մեկնաբանման օբյեկտ: Հենց օբյեկտի, այս պարագայում՝ պայմանագրի, առանձնահատկություններն են թույլ տալիս խորապես մոտենալ խնդրին:

Միևնույն ժամանակ պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի արդիականությունն ավելի է կարևորվում պայմանագրային իրավունքի հետագա զարգացման պարագայում՝ պայմանավորված շուկայական տնտեսության անցումով: Պայմանագրերի նոր տեսակների առաջացումը, պայմանագրային հարաբերությունների զարգացումը, քաղաքացիաիրավական պայմանագրերի բովանդակության և տեքստերի բարդացումը, առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պայմանագրային հարաբերություններին մասնակցության աճը առաջ են բերում պայմանագրային հարաբերություններում նոր վեճերի, որոնք կարիք ունեն մեկնաբանման:

Պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի նշանակությունը արժևորվում է հատկապես քաղաքացիական իրավունքի դոկտրինայի և պրակտիկայի համար: Այս ինստիտուտի կիրառման ոլորտը շատ լայն է, քանզի պայմանագրի նշանակության շուրջ տարածայնությունները կարող են առաջանալ տարատեսակ պայմանագրային վեճերի լուծման ժամանակ: Որպես կանոն, պայմանագրի մեկնաբանման հարցերը առաջանում են պայմանագրի կնքվածության և վավերության, պայմանի խախտման համար սահմանված պատասխանատվության դեպքերում:

Նույնիսկ այդ վեճերի բազմազանության պարագայում հնարավոր է առաջ քաշել և խմբավորել դրանց լուծման ընդհանրական մոտեցումներ:

Անհրաժեշտ է նկատել, որ հայրենական գրականության մեջ գոյություն չունի գեթ մեկ աշխատություն, որը նվիրված կլինի այս ինստիտուտի համակողմանի ուսումնասիրությանը և վերլուծությանը: Նույնիսկ պարտավորական և պայմանագրային իրավունքին նվիրված աշխատություններում բացակայում են այս խնդրին վերաբերող առանձին ուսումնասիրություններ: Կարծում ենք՝ դրա պատճառն այն է, որ ներպետական իրավունքի համար պայմանագրի մեկնաբանումը համեմատաբար նոր ինստիտուտ է: Վերջիվերջո, որպես օրենսդրական կառուցակարգ, այն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվել է միայն 1998թ., իսկ 1964թ. քաղաքացիական օրենսգիրքը դրա վերաբերյալ որևէ նորմ չի պարունակել: Հայրենական դոկտրինայում այս բացը լրացնելու համար սույն աշխատանքում էականորեն ուսումնասիրվել է արտասահմանյան փորձը: Մասնավորապես, ուսումնասիրվել են երեք առաջատար իրավական համակարգերի փորձը՝ Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա: Ուսումնասիրվել է նաև ԱՄՆ և ՌԴ իրավական համակարգերի փորձը:

Գործող քաղաքացիական օրենսդրությունը պարունակում է պայմանագրի մեկնաբանմանը նվիրված ընդամենը մեկ հոդված, դա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածն է, որի իրավակիրառ պրակտիկան բավականին հակասական և իրարամերժ է: Ելնելով կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության քաղաքացիաիրավական սկզբունքներից՝ պայմանագրային կողմերի իրական կամքի բացահայտումը հանդիսանում է մեկնաբանման հիմնական նպատակը: Վերոնշյալ նորմը կիրառելիս ներպետական դատարանների հակվածությունը պայմանագրի տառացի նշանակությանը, առանց հաշվի առնելու վեճի լուծման համար կարևոր հանգամանքները, չի կարելի համարել արդարացված:

Նման հակվածության պատճառը ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011թ. մայիսի 27-ի որոշումն էր: Այդ որոշմամբ ուղղակի սահմանվեց մեկնաբանման կանոնների հիերարխիա և այդ հիերարխիկ բուրգի հիմքում ընկած էր տառացի մեկնաբանումը: Այդ կերպ Վճռաբեկ դատարանը սահմանեց պայմանագրի տառացի մեկնաբանման նախապատվության արմատավորված քաղաքականություն՝ կողմերի իրական կամքի բացահայտումը տանելով վերջին պլան: Մինչ օրս այս որոշումն ուղենիշային է ՀՀ բոլոր դատարանների համար: Ներպետական իրավունքում ձևավորված պայմանագրի մեկնաբանման նման մոտեցումն արդարացված չէ, չի բխում պայմանագրային իրավունքի համար հիմնաքարային համարվող կամքի

ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքներից: Պետք է նկատել, որ նման որոշման պատճառը ոչ թե «< Վճռաբեկ դատարանի իրավաքաղաքական հայեցողությունն էր, այլ «< քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի բովանդակությունը: Այլ խոսքերով, նման մոտեցումը բխում է ինքնին պայմանագրի մեկնաբանման օրենսդրական կարգավորումներից:

Արդարության համար պետք է նշել, որ 2014թ. «< Վճռաբեկ դատարանը որոշակիորեն վերանայեց իր նախկին որոշումը: Այդ որոշմամբ Վճռաբեկ դատարանը հետ կանգնեց իր նախկինում արտահայտած մեկնաբանման հիերարխիկ մոտեցումից: Սակայն արդյո՞ք սա նշանակում է, որ Վճռաբեկ դատարանը հետ կանգնեց տառացի մեկնաբանման նախապատվության որդեգրած ընդհանուր քաղաքականությունից: Կարծում ենք՝ ոչ: Բանն այն է, որ Վճռաբեկ դատարանի առաջին դիրքորոշումը որևէ շրջանակ չէր նախատեսում, չունեի որևէ սահմանափակում և կրում էր ընդհանրական բնույթ: Իսկ ահա երկրորդ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումը կապեց առանձին դեպքերի հետ և այն էլ՝ գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններով պայմանավորված:

Ներպետական իրավունքում և դատական պրակտիկայում առկա մեկնաբանման կանոններն իրենց բավականաչափ արդարացնում են դասական պայմանագրային ձևաչափերում, որտեղ հստակ գործում է օֆերտա-ակցեպտ կառուցակարգը: Սակայն գոյություն ունեն պայմանագրային հարաբերություններ, որտեղ պայմանագրի մեկնաբանման ավանդական կանոններն այդքան էլ արդյունավետ չեն: Նման պայմաններում պետք է գտնել այլ կանոններ, որոնցից մեկն է «*Contra proferentem*» կանոնը: Վիճելի պայմանի հեղինակի դեմ ուղղված մեկնաբանման այս կանոնի նպատակն է պատժել պայմանագրի ուժեղ կողմին, և, հակառակը, պաշտպանել թույլ կողմին: Այս կանոնի կիրառման նախադրյալը տնտեսական անհավասարության պայմաններում կնքված պայմանագրերն են: Այլ խոսքերով, այս կանոնն իրեն շատ հարմարավետ է զգում միակողմանիորեն կնքված պայմանագրերում: Հաշվի առնելով, որ ներպետական իրավունքում պայմանագրային վեճերի մեծամասնությունը ծագում է միակողմանիորեն պարտադրված պայմանագրերից (բանկային, ապահովագրական, կոմունալ սպասարկումների վեճեր և այլն)՝ կարծում ենք, որ «< օրենսդրության մեջ դրա նախատեսումը հնարավորություն կտա էֆեկտիվորեն լուծել այդ ոլորտում առկա վեճերը:

Վերոնշյալ տեսական և պրակտիկ հետևությունները պայմանավորում են սույն թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսանում քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման գիտականորեն հիմնավորված ընդհանուր մոտեցման ձևավորումը, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի մեկնաբանման առանձին մոտեցումների սահմանումը, ինչը կարող է կիրառվել տեսական վերլուծությունների, մեկնաբանման վեճերի ժամանակ ներպետական դատարանների և պրակտիկ իրավաբանների կողմից:

Վերոգրյալ նպատակից ելնելով՝ սույն աշխատությամբ դրվել են հետևյալ խնդիրները՝

➤ բացահայտել կամքի և կամահայտնության տեսությունների էությունը և հարաբերակցությունը, ինչպես նաև դրանց ազդեցությունը պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի վրա,

➤ սահմանել այն նախադրյալները, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել պայմանագրի մեկնաբանում,

➤ բացահայտել պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ և օբյեկտիվ տեսությունների բովանդակությունը և դրանց կիրառման հնարավորությունը ներպետական օրենսդրության մեջ,

➤ բացահայտել պայմանագրի տառացի մեկնաբանմանը վերաբերվող ներպետական իրավունքում ձևավորված մոտեցումները, վեր հանել թերությունները և ներկայացնել արդյունավետ լուծումներ,

➤ բացահայտել պայմանագրի ռեալ մեկնաբանմանը վերաբերվող ներպետական իրավունքում ձևավորված մոտեցումները, վեր հանել թերությունները և ներկայացնել արդյունավետ լուծումներ,

➤ բացահայտել պայմանագրի մեկնաբանման «Contra Proferentem» կանոնի էությունը, հասկացությունը և բովանդակությունը և վերլուծել այդ կանոնի ներպետական իրավունք տեղայնացնելու հնարավորությունը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հետազոտության իրավաբանական տեսական հիմքն են հանդիսացել Վ. Դ. Ավետիսյանի, Տ. Կ. Բարսեղյանի, Ա. Մ. Հայկյանցի, Մ. Ի. Բռազինսկու, Ի. Ա. Պոկրովսկու, Ե. Ա. Սուխանովի, Ա. Գ. Կարապետովի, Ի. Բ. Նովիցկու, Ի. Ս. Պերետերսկու, Գ. Ֆ. Շերշենևիչի, Ս. Վ. Սարբաշի, Կ. Յվայգերտի, Հ. Կյոտցի, Ա. Բ. Բայրամկուլովի, Հ. Կ. Գրիգորյեթի, Ս. Վ. Կանարիսի, Կ. Լյուխտնի, Ս. Միտչելի, Կ. Լարենցի, Մ.

Վոլֆի, Ա. Լյուդերիցի, Ս. Վոգենաուերի, Ս. Գրամոնդի, Ֆ. Լյոթենշյագերի, Ս. Զ. Բարտոնի, Օ. Լանդրի, Է. Գայլարդի և այլոց աշխատությունները: Իսկ հետազոտության փիլիսոփայական, հոգեբանական, պատմական, լեզվաբանական տեսական հիմքն են հանդիսացել Տիցերոնի, Գայի, Ցելսիուսի, Ուլպիանոսի, Պապինիանոսի, Պավլոսի, Ռ. Տիմերմանի, Ի. Դ. Զայցևի, Ա. Շյուցի, Հ. Գ. Գադամերի, Ժ. Բենտամի, Է. Դյունոնի, Կ. Մենգերի, Ֆ. Կեսլերի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են հանդիսացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, արտասահմանյան տարբեր երկրների քաղաքացիական օրենսգրքերը և օրենքները, քաղաքացիական հարաբերություններ կարգավորող միջազգային իրավական կոնվենցիաները, ինքնուրույն պայմանագրային հարաբերություններ կարգավորող ազգային և միջազգային իրավական կոդիֆիկացիաները:

Հետազոտության փորձառական հիմքն են հանդիսացել ՀՀ Վճռաբեկ դատարանի, ՀՀ Վերաքննիչ դատարանի, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատական ակտերը, արտասահմանյան երկրների, մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի, ՌԴ-ի դատական տարբեր ատյանների ակտերը: Ուսումնասիրվել են նաև ՌԴ Առևտրա-արդյունաբերական պալատին կից Մոսկվայի ձեռնարկատիրական արբիտրաժային դատարանի, Քաղաքացիական ինժեներության կապալառուների ֆեդերացիայի (FCEC), Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնի (ICSID), Ապրանքների միջազգային վաճառքի պայմանագրերի (CISG) հետ կապված խորհրդատվական խորհրդի և այլ մարմինների որոշումները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ աշխատանքում կիրառվել են ընդհանուր գիտական մեթոդներ, մասնավորապես՝ ճանաչողության դիալեկտիկական մեթոդը, ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, համեմատության և անալոգիայի մեթոդները: Ատենախոսական հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար կիրառվել են նաև իրավագիտության ոլորտի մասնավոր-գիտական մեթոդներ, մասնավորապես՝ նորմատիվ-տրամաբանական, համեմատաիրավական, պատմա-իրավական և այլն: Սույն աշխատանքի պատրաստման ընթացքում հատկապես մեծ ուշադրություն է դարձվել պատմաիրավական և համեմատաիրավական

մեթոդներին:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման թեմայով ՀՀ օրենսդրությունում այդ ինստիտուտի նախատեսման ժամանակահատվածից ի վեր չի կատարվել խոր, բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրություն: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և եզրակացության մեջ ամփոփված մտահանգումներում և առաջարկներում:

Պաշտպանության առաջ քաշվող դրույթները:

1. Ինչպես ցանկացած գործարք, պայմանագիրը ևս կամային ակտ է: Պայմանագրային հարաբերություններում կողմերի կամքն ամենուր է, այն հատկապես ընդգծվում է օֆերտա-ակցեպտ դասական կառուցակարգում: Կամային պրոցեսը դրսևորվում կամքի և կամահայտնության հարթություններում, որպիսի իրավիճակում խնդրահարույց է, թե ինչի՞ն տալ նախապատվություն՝ կամքին, թե՞ կամահայտնությանը: Ներկայումս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում պայմանագրի մեկնաբանման կարգավորումներում առկա է կամահայտնության տեսությանը ընդգծված նախապատվություն, ինչը, մեր կարծիքով, մեկնաբանման համակարգը տանում է սխալ ուղղությամբ:

Իրականում երկու տեսություններն էլ ունեն իրենց իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական, նախադրյալները, երկուսն էլ ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս տեսությունները հանդիսանում են պայմանագրի մեկնաբանման համար հիմքեր՝ կատարված ուսումնասիրությամբ հիմնավորվել է այն տեսակետը, որ մեկին մյուսի հանդեպ պետք չէ առավելություն տալ, այլ պետք է ընտրել այնպիսի մոտեցում, որն իր մեջ կհամադրի այս երկու տեսությունների դրական կողմերը և կհավասարակշռի դրանց:

2. Իրավաբանական գրականության մեջ քննարկվում է նաև լինզվիստիկայի ոլորտում արված հետևությունները (լինզվիստիկական <<ձեռքբերումները>>) իրավունքի ոլորտ մեխանիկորեն փոխադրելու նպատակահարմարության հարցը: Խնդիրն այն է, որ պրակտիկայում շատ հաճախ դատարանները պայմանագրի այս կամ այն պայմանը (բառը)

մեկնաբանելու համար ուղղակիորեն մտնում են լեզվաբանության ոլորտ: Այն ժամանակ, երբ լեզվաբանները կենտրոնացած են նրա վրա, որ լեզուն արտահայտի ճշմարտությունը, իրավաբանների նպատակն այն է, որ լեզուն արդարացնի պայմանադիր կողմերի սպասումները: Եթե լեզվաբանության առաջ գլոբալ խնդիր է դրված առաջին հերթին ճանաչողության, այնուհետև երևույթների բացահայտման, ապա իրավագիտության առաջնային խնդիրն այն հետևությունների ձևավորումն է, որոնք կարող են դատարանին օգնել ճիշտ լուծել վեճը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է օրենսդրական մակարդակով պայմանագրի մեկնաբանման ժամանակ արգելել լեզվաբանական փորձաքննությունների իրականացումը, իսկ լեզվաբանական այլ հնարքների կիրառումը դատարանի համար կարող է ունենալ միայն ուղղորդող նշանակություն:

3. Պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի գոյությունն ինքնանպատակ չէ: Դրա կիրառման համար անհրաժեշտ են որոշակի հիմքեր, այլ կերպ ասած՝ նախադրյալներ: Լեզուն, որն օգտագործում են պայմանագրի կողմերը, բազմիմաստ է: Բառերի և բառակապակցությունների բազմիմաստությունը պայմանավորված է ինքնին լեզվի էության հետ: Խոսքի օբյեկտիվ բազմիմաստությունը և ընկալման սուբյեկտիվ տարբերություններն ամուր կապված են միմյանց հետ, քանզի պայմանագրում կիրառվող բառերի և բառակապակցությունների նշանակությունն ուղղակիորեն կախված է այն կիրառելու համատեքստից, ինչի որոշման հնարավորությունն էլ իր հերթին կախված է կողմերի ընկալման հորիզոններից: Այդ իսկ պատճառով խոսելով պայմանագրի բովանդակության մեջ առկա հակասությունների պատճառների մասին՝ առանձնացվել է երկու նախադրյալներ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Առաջինը կապված է պայմանագրում օգտագործվող բառերի նշանակության բազմակիության, իսկ երկրորդը՝ կողմերի ընկալման հորիզոնների անհամապատասխանության հետ: Այդ նախադրյալները հնարավորություն են տալիս հստակեցնել պայմանագրի մեկնաբանման համակարգի նպատակը և ուղղվածությունը:

Կատարված ուսումնասիրությամբ վեր են հանվել նաև պայմանագրային անորոշությունների հայտնաբերման եղանակները: Իրավաբանական դոկտրինայում ձևավորված անորոշությունների բացահայտ և թաքնված տեսակների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ բացահայտ

անորոշությունն ուղղակիորեն հանդիպում է պայմանագրի լեզվում, իսկ թաքնված անորոշությունը հանդիպում է այն դեպքերում, երբ պայմանագրի լեզուն կիրառվում է կոնկրետ փաստական հանգամանքներում: Անորոշությունների հայտնաբերման ներկայացված դեպքերը արժեքավոր են այնքանով, որքանով հնարավորություն են տալիս կատարել հետևյալ եզրահանգումը՝ պայմանագրի պայմանը, որն առաջին հայացքից թվում է պարզ և միանշանակ, գործի բոլոր հանգամանքների հետ հարաբերակցություն մեջ մտնելով, կարող է ունենալ թաքնված անորոշություններ:

4. Իրական կամքի հաստատումը համարվում է պայմանագրի մեկնաբանման առաջնային և հիմնական նպատակը, ինչի հաստատումն է համարվում ինչպես առաջատար իրավական համակարգերում, այնպես էլ միջազգային իրավական տարբեր ակտերում պարունակվող նորմերի հիերարխիան: Այսպիսի որոշումը պայմանավորված է պայմանագրի համար հիմնաքարային համարվող կամքի ինքնավարության սկզբունքով: Ներպետական դատական պրակտիկայում պայմանագրի մեկնաբանման միտումն ուղղված է վիճելի պայմանի՝ բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը: Յայսօր, ներպետական դատական պրակտիկայում գործում է տառացի մեկնաբանման նախապատվության արմատավորված քաղաքականություն, ինչը պայմանավորված է կիրառման հեշտությամբ: ՀՀ քաղ. օր. 447-րդ հոդվածն ուղղակիորեն տարանջատում է պայմանագրի տառացի նշանակությունը կողմերի իրական կամքից: Մասնավորապես, օրենսդիրը դատարանին թույլ է տալիս բացահայտել կողմերի իրական կամքը միայն այն դեպքում, երբ տառացի նշանակությունը չի բացահայտում պայմանագրի բովանդակությունը: Նման մոտեցումն անթույլատրելի է: Պայմանագրի տառացի նշանակությունը որոշ դեպքերում կարող է արտահայտել կողմերի իրական կամքը, իսկ որոշ դեպքերում՝ ոչ: Սակայն դա չի նշանակում, որ պետք է գերազնահատել պայմանագրի տառացի մեկնաբանման նշանակությունը: Հետևաբար, առաջարկվել է քաղաքացիական օրենսգրքում նախատեսել հետևյալ կանոնը՝ պայմանագիրը մեկնաբանելիս անհրաժեշտ է հետևել կողմերի իրական կամքին:

5. Կատարված ուսումնասիրմամբ վեր են հանվել տառացի մեկնաբանման կիրառման ձևաչափի հետ առկա խնդիրները: Մասնավորապես, կարևորելով տառացի մեկնաբանման նշանակությունը՝ առաջարկվել է սահմանել տառացի նշանակության կանխավարկածի

սկզբունք: Դա մի կողմից հնարավորություն կտա կողմերին իրենց իրական կամքը բացահայտելու առանց սահմանափակման հղում կատարել ցանկացած ապացույցի, մյուս կողմից՝ կկանխի պայմանագրի իմաստի խեղաթյուրումը, այդ թվում նաև կողմերի դատավարական իրավունքների չարաշահման հնարավորությունը:

Նման մոտեցումն արդարացված է, սակայն բոլոր իրավիճակների համար առանց բացառությունների կիրառումը խնդրահարույց է: Մասնավորապես կան դեպքեր, երբ պայմանի տառացի նշանակությունն ուղղակի տարակուսանքի տեղիք է տալիս: Կարծում ենք, որ այն դեպքերում երբ պայմանի տառացի նշանակությունը չի ենթարկվում ողջամտության թեստի կիրառմանը, ապա դատարանն իրավունքի ունի սեփական նախաձեռնությամբ անցում կատարել ռեալ մեկնաբանման և փորձել հաստատել կողմերի իրական կամքը:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ առաջարկվել է սահմանել հետևյալ կանոնը՝ մեկնաբանում իրականացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն, որ պայմանագրում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը ենթադրվում է կողմերի իրական կամքին համապատասխանող, եթե հակառակը չի ապացուցել շահագրգիռ կողմը:

Ապացույցների անբավարարության դեպքում դատարանը կարող է սեփական նախաձեռնությամբ շեղվել պայմանի տառացի նշանակությունից միայն այն դեպքում, եթե այն ակնհայտորեն ողջամիտ չէ:

6. Կողմերի իրական կամքի առավելությունը պայմանագրի տեքստի նկատմամբ, առաջին հերթին ուղղված է կողմերի կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների պահպանությանը: Իսկ ի՞նչ է նշանակում կողմերի իրական կամք: Իրական կամքի տակ պետք է հասկանալ օֆերենտի էմպիրիկ կամքը՝ սահմանափակված այն նշանակությամբ, որը հասանելի է եղել ակցեպտանտի հասկացողության համար: Իրական կամքի նման բնորոշման հիմքում ընկած է այն գաղափարը, որ պայմանագրի կողմերը մտածում են

Այս մոտեցումն իրենից ներկայացնում է փոխզիջումային որոշում օֆերենտի և ակցեպտանտի միջև, որը հնարավորություն է տալիս դատարանին հավասարակշռություն ապահովել կոնկրետ դեպքում, երբ կողմերից յուրաքանչյուրը հավասար պայմաններով կարող է ներկայացնել

ապացույցներ առ այն, թե ինչպիսին է եղել իր իրական կամքը և արդյո՞ք կարող էր դա ընկալվել հայտարարվող նշանակությամբ:

Շեռլակաբար, առաջարկվել է քաղաքացիական օրենսգրքում նախատեսել հետևյալ կարգավորումը՝ եթե մի կողմն ուներ մտադրություն պայմանագրին տալ կոնկրետ նշանակություն և պայմանագրի կնքման պահին մյուս կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ առաջին կողմի նման մտադրության մասին, ապա պայմանագիրը մեկնաբանվում է առաջին կողմի մտադրություններին համապատասխան:

7. Սույն ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ մեկնաբանման սուբյեկտիվ տեսությամբ սահմանափակվելն արդարացված չէ և որոշ դեպքերում իրական կամքի հետագա որոնումը պետք է իրականացնել մեկնաբանման օբյեկտիվ տեսության կիրառմամբ: Բանական կամքը, որի հաստատմանն է ուղղված մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը, ընդգրկում է պայմանագրի պայմանի առավել հավանական նշանակությունը, ելնելով նրանից, թե ինչպես բանական անձը (միջին վիճակագրական կոնտրագենտը) կհասկանար դրա նշանակությունը: Օբյեկտիվ տեսության հիմնական թերությունը կայանում է նրանում, որ գրեթե անսահմանափակ հնարավորություններ է տալիս դատարանին, ինչը կարող է բերել կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների խախտման, ինչն էլ իր հերթին կարող է բերել պայմանագրի խեղաթյուրման: Այդ իսկ պատճառով, առաջարկվել է, որ օբյեկտիվ տեսությունը կիրառելիս պետք է հաստատել վիճելի պայմանի այնպիսի բանաձևում, որն ունի ոչ թե ցանկացած արտարկտ երրորդ անձը, այլ բանական անձը՝ կամահայտնության ակցեպտանտի տեղում: Պայմանագրի կողմի տեղում բանական անձի տեղայնացումը դատարանին կարող է սահմանափակել պայմանագրի վերաշարադրումից արտարկտ հիմքերով՝ հաշվի առնելով բարեխղճությունը և արդարությունը:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվել է քաղաքացիական օրենսգրքում նախատեսել հետևյալ կարգավորումը՝ եթե պայմանագիրը հնարավոր չէ հաստատել կողմերի մտադրությունների համատեքստում, ապա պայմանագիրը մեկնաբանվում է այն նշանակությամբ համապատասխան, որը դրան կտալին բանական անձինք համանման հանգամանքներում:

8. Պայմանագրի մեկնաբանման «Contra proferentem» կանոնը ներպետական իրավունքին և դատական պրակտիկային ծանոթ չէ: Միգուցե պատճառն այն է, որ խորհրդային ժամանակաշրջանում այն եղել է

օտար ներպետական իրավունքի համար: Ուսումնասիրությամբ հիմնավորվել է մեկնաբանման «Contra proferentem» կանոնի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակությունը: Սահմանվել են մի շարք հաղթահարելի կանխավարկածներ, որոնք կարող են լուծել պայմանի հեղինակության հարցը և համարժեքորեն բաշխել ապացուցման բեռի պարտականությունը: Հստակեցվել է այս կանոնի տեղը մեկնաբանման համակարգում՝ հաշվի առնելով իրական կամքի բացահայտման հնարավորությունը:

Սույն հետազոտությամբ հստակեցվել է նաև կանոնի կիրառման ոլորտը: Գաղտնիք չէ, որ ներպետական դատական պրակտիկայում պայմանագրային վեճերի առյուծի բաժինը ծագում է միակողմանիորեն պարտադրված պայմանագրերից (բանկային, ապահովագրական վեճեր և այլն): Այս ոլորտում կանոնի կիրառումը հնարավորություն կտա պաշտպանել պայմանագրի թույլ կողմի (սպառողների) շահերը և բարձրացնել պայմանագրային կարգապահությունը:

Հետևաբար, առաջարկվել է ներպետական օրենսդրության մեջ նախատեսել հետևյալ կարգավորումը՝ «Contra proferentem» կանոնի համաձայն՝ վիճելի պայմանը մեկնաբանվում է ընդդեմ պայմանի հեղինակի և համապատասխանաբար այն կողմի օգտին, ով ընդունել է այդ պայմանը: «Contra proferentem» կանոնը կիրառվում է միակողմանիորեն պարտադրված պայմանագրերի դեպքում և այն ժամանակ, երբ մեկնաբանման մյուս կանոնները ձախողվում են:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական քաղաքացիական իրավունքում պայմանագրի մեկնաբանմանը նվիրված առաջին հետազոտությունն է, որի արդյունքները կարող են օգտագործվել հետագա գտական ուսումնասիրություններում: Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել քաղաքացիական օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հե-

տազուտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի էությունը և հիմնական մոտեցումները» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի ծագումը և պատմական զարգացումը (կամք և կամահայտնություն)» վերտառությամբ, ներկայացվել է պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի ծագումը և ձևավորումը, այդ ինստիտուտի դրսևորումը պատմական տարբեր ժամանակահատվածներում: Ներկայացվել են ինստիտուտի համար հիմնաքարային համարվող երկու տեսությունները՝ կամք և կամահայտնություն, վերլուծվել են դրանց ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը: Որպես արդյունք առաջարկվել է ընտրել փոխզիջումային որոշում:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման նախադրյալները» վերտառությամբ, ուսումնասիրվել են պայմանագրի մեկնաբանման համար ելակետային համարվող նախադրյալները (խոսքի օբյեկտիվ բազմիմաստություն, ընկալման սուբյեկտիվ տարբերություն): Ուսումնասիրվել է դրանց ազդեցությունն այս ինստիտուտի վրա: Նման ուսումնասիրությունն արժեքավոր է այնքանով, որքանով հնարավորություն է տալիս

պայմանագրի մեկնաբանման ինստիտուտը դնել ճիշտ ուղու վրա:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ տեսությունը» վերտառությամբ, ներկայացվել է կամքի ինքնավարության սկզբունքը, որի վրա հիմնված է այս տեսությունը: Դա հիմք է հանդիսացել որպես պայմանագրի մեկնաբանման առաջնային նպատակ սահմանել կողմերի իրական կամքի բացահայտումը:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը» վերտառությամբ, ներկայացվել է վստահության պաշտպանության սկզբունքը, որի վրա հիմնված է այս տեսությունը: Վերլուծվել է բանական անձի կառուցակարգը պայմանագրային իրավահարաբերություններում: Քննարկվել է այդ կառուցակարգի տեղայնացման հնարավորությունը պայմանագրի մեկնաբանման ինստիտուտում

Երկրորդ գլուխը՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման ավանդական կանոնները» վերտառությամբ, բաղկացած է 2 պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի տառացի մեկնաբանումը» վերտառությամբ, քննադատվել է ներպետական դատական պրակտիկայում տառացի մեկնաբանման նախապատվությանը միտված մոտեցումը: Ներկայացվել են լուծումներ, որոնք առավել սահուն ձևով են կարգավորում տառացի և ռեալ մեկնաբանումների հարաբերակցությունը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Պայմանագրի ռեալ մեկնաբանումը» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել ՀՀ դատական պրակտիկայում մեկնաբանման այս տեսակի շուրջ առկա թերություններին և բացթողումներին: Այս տեսանկյունից խմբավորված ներկայացվել է առաջատար իրավական համակարգերի փորձը, ինչն ուղենիշային կարող է հանդիսանալ ներպետական միասնական պրակտիկա ձևավորելու համար:

Երրորդ գլուխը՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման «Contra Proferentem» կանոնը» վերտառությամբ, բաղկացած է 3 պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ ««Contra Proferentem» կանոնի ծագումը, զարգացումը և կիրառման նախադրյալները» վերտա-

ռությանը, իրականացվել է այս կանոնի ձևավորման պատմաիրավական վերլուծություն: Ներկայացվել են այն տնտեսական և իրավական նախադրյալները, որոնք բնութագրում են այս կանոնի դրական կողմերի մասին:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ ««Contra Proferentem» կանոնի հարաբերակցությունը Contra մոդելով այլ կանոնների հետ» վերտառությամբ, ուսումնասիրվել է այս կանոնի հարաբերակցությունը համանման մոդելով աշխատող այլ կանոնների հետ: Նման հարաբերակցությունն արժեքավոր է այնքանով, որքանով հնարավորություն է տալիս էականորեն լուծել վիճելի պայմանի հեղինակության հարցը:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ ««Contra Proferentem» կանոնի կիրառման ոլորտն ու սահմանները» վերտառությամբ, ուսումնասիրվել է այս կանոնի իրավական բնույթը, դրա տեղը պայմանագրի մեկնաբանման համակարգում, ինչպես նաև կանոնի կիրառման սահմանները: Վերջնարդյունքում քննարկվել է այս կանոնի ներպետական իրավական համակարգ ներդնելու հնարավորությունը:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Առևտրային կապերի զարգացման և հռոմեական իրավական համակարգի ազատականացման արդյունքում՝ մեծ ուշադրություն սկսեց դարձվել կողմերի մտադրություններին, այսինքն՝ նրան, ինչ կողմերը նկատի ունեին և ցանկանում էին արտահայտել: Արդյունքում փոխվեց պայմանագրի մեկնաբանման ուղղվածությունը հանդիսավոր կերպով արտահայտված գործարքների նախապատվությունից դեպի կողմերի իրական կամքի փնտրում:

2. Պատմական բոլոր ժամանակահատվածներում կամքի և կամահայտնության տեսությունները եղել են միմյանց միջև մրցակցության մեջ: Իրականում, երկու տեսություններն էլ ունեն իրենց իրավական, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական նախադրյալները, երկուսն էլ ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Այս տեսությունները, դնելով պայմանագրի մեկնաբանման համակարգի հիմքում, պետք չէ առավելություն տալ մեկին մյուսի հանդեպ, պետք է ընտրել այնպիսի մոտեցում, որն իր մեջ կհամադրի այս երկու տեսությունների դրական կողմերը և կհավասարակշռի դրանց:

3. Պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի գոյությունն ինքնա-նպատակ չէ: Դրա կիրառման համար անհրաժեշտ են որոշակի նախա-դրյալներ: Պայմանագրի անորոշությունը որպես մեկնաբանման ընդհանուր նախադրյալ ճիշտ է բնորոշել որպես իրավիճակ, երբ պայմանագրի պայմանը հավասարապես թույլ է տալիս երկու և ավելի նշանակության առկայություն, ինչը կողմերի ապացուցման առարկան է:

4. Պայմանագրային անորոշությունները լինում են երկու տեսակի՝ բացահայտ և թաքնված (ներքին և արտաքին): Կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումը՝ պայմանագրի պայմանը, որը չնայած առաջին հայացքից թվում է պարզ և միանշանակ, սակայն գործի բոլոր հանգա-մանքների հետ հարաբերակցություն մեջ, կարող է ունենալ թաքնված անորոշություններ:

5. Բառերի և բառակապակցությունների բազմիմաստությունը պայմանավորված է ինքնին լեզվի էությամբ: Բառերը կամ բառակապակ-ցությունները, որոնց նշանակությունը առաջին հայացքից կարող է պարզ թվալ, մասնավոր և հատկապես պայմանագրային իրավունքում կարող է այդպիսի պարզությունը վերանալ:

6. Խոսքի օբյեկտիվ բազմիմաստությունը և ընկալման սուբյեկտիվ տարբերություններն ամուր կապված են միմյանց հետ, քանզի պայմա-նագրում կիրառվող բառերի և բառակապակցությունների նշանակությունն ուղղակիորեն կախված է այն կիրառելու կոնտեքստից, ինչի որոշման հնարավորությունն էլ իր հերթին կախված է կողմերի ընկալման հորիզոններից: Այդ իսկ պատառով խոսելով պայմանագրի բովանդա-կության մեջ առկա հակասությունների պատճառների մասին՝ պետք է առանձնացել երկու նախադրյալ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

7. Պայմանագրի երկու կողմերից էլ հնարավոր է պահանջել միջոց-ների ձեռնարկում՝ սեփական կամքի բացահայտման և կամահայտնության իմաստի ճշգրտման համար: Այդպիսի որոշումը համապատասխանում է պայմանագրի կողմերի երկկողմանի պատասխանատվության գաղափարին: Կարելի է եզրակացնել, որ պայմանագրի մեկնաբանման ժամանակ դատարանի կողմից սուբյեկտիվ տեսությունը կիրառելիս դատարանի հիմնական խնդիրը վիճելի պայմանի հեղինակության հաստատումն է և դրա իմաստի ապացուցման բեռի բաշխումը հայտարարողի և հասցեատիրոջ միջև:

8. ՀՀ քաղ. օր. 447-րդ հոդվածն ուղղակիորեն տարանջատում է պայմանագրի տառացի նշանակությունը կողմերի իրական կամքից: Նման մոտեցումն անթույլատրելի է: Պայմանագրի տառացի նշանակությունը որոշ դեպքերում կարող է արտահայտել կողմերի իրական կամքը, իսկ որոշ դեպքերում՝ ոչ: Սակայն դա չի նշանակում, որ պետք է գերազնահատել պայմանագրի տառացի նշանակությունը: Հետևաբար, առաջարկում ենք քաղաքացիական օրենսգրքում նախատեսել հետևյալ կարգավորումը՝ կամահայտնությունը մեկնաբանելիս անհրաժեշտ է հետևել կողմերի իրական կամքին:

9. Կողմերի իրական կամքի առավելությունը պայմանագրի տեքստի նկատմամբ առաջին հերթին ուղղված է կողմերի կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների պահպանությանը: Հաշվի առնելով դա՝ ո՛չ նշանակությունը, որը դրված է օՖերենտի կամահայտնության մեջ, ո՛չ հասկացողությունը, որը ծագել է ակցեպտանտի մոտ, առանձին-առանձին չեն կարող ուսումնասիրվել: Այս մոտեցումն իրենից ներկայացնում է կողմերի միջև փոխզիջումային որոշում, որը հնարավորություն է տալիս դատարանին հավասարակշռություն ապահովել կոնկրետ դեպքում: Հետևաբար, առաջարկվել է քաղաքացիական օրենսգրքում նախատեսել հետևյալ կարգավորումը՝ եթե մի կողմն ուներ մտադրություն պայմանագրին տալ կոնկրետ նշանակություն, և պայմանագրի կնքման պահին մյուս կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ առաջին կողմի նման մտադրության մասին, ապա պայմանագիրը մեկնաբանվում է առաջին կողմի մտադրություններին համապատասխան:

10. Եթե պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսության հիմքը կամքի ինքնավարության սկզբունքն է, ապա օբյեկտիվ տեսության հիմքը վստահության պաշտպանության սկզբունքն է ինչպես անմիջականորեն պայմանագրի կողմերի, այնպես էլ երրորդ անձանց: Պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը նախատեսված է պաշտպանելու առաջին հերթին կողմի ողջամիտ, հիմնավոր վստահությունը (justifiable reliance) մյուս կողմի հայտարարության բովանդակության հետ:

11. Մեկնաբանման օբյեկտիվ տեսության դեպքում պետք է հաստատել, թե ինչպիսին կլինե՞ր բանական անձի հասկացողությունն ակցեպտանտի տեղում: Բանական կամքը, որի հաստատմանն է ուղղված մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը, ընդգրկում է պայմանագրի պայմանի առավել հավանական նշանակությունը: Ելնելով վերոնշյալից՝ առա-

չարկում ենք քաղաքացիական օրենսգրքում նախատեսել հետևյալ կարգավորումը՝ եթե պայմանը հնարավոր չէ հաստատել կողմերի մտադրությունների համատեքստում, ապա պայմանագիրը մեկնաբանվում է այն նշանակությանը համապատասխան, որը դրան կտային կողմերին նման բանական անձինք համանման հանգամանքներում:

12. Ներպետական դատական պրակտիկայում պայմանագրի մեկնաբանման միտումն ուղղված է վիճելի պայմանի բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը, ինչը պայմանավորված է ՀՀ քաղ. օր. 447-րդ հոդվածի կարգավորումներով: Ցայսօր ներպետական դատական պրակտիկայում գործում է տառացի մեկնաբանման նախապատվության արմատավորված քաղաքականություն: Իրավական վեճը լուծելու համար, ըստ էության, պահանջվում է միայն պայմանագրի տեքստը ճանաչել կողմերի իրական կամքին համապատասխանող: Խնդիրն այն է, որ պայմանագրի տառացի նշանակությամբ սահմանափակվող կանոնների կիրառմամբ, հաշվի չի առնվում այն, որ առաջին հայացքից ակնհայտ նշանակություն ունեցող փաստաթուղթը չի խոչընդոտում և, իհարկե, չի ազատում դատարանին փաստերի ուսումնասիրության անհրաժեշտությունից: Հետևաբար, ինքնին տառացի մեկնաբանում տերմինը կարող է կիրառվել որպես սահմանափակ մեկնաբանման տեսակ:

13. Ամբողջովին չցանկանալով հրաժարվել տառացի մեկնաբանման նախապատվությունից՝ կարծում ենք, որ առավել արդյունավետ տարբերակը տառացի նշանակության օգտին կանխավարկածի սահմանումն է: Դա մի կողմից հնարավորություն կտա կողմերին իրենց իրական կամքը բացահայտելու համար առանց սահմանափակման հղում կատարել ցանկացած ապացույցի, մյուս կողմից՝ կկանխի պայմանագրի իմաստի խեղաթյուրումը: Մասնավորապես կարելի է տալ հետևյալ սահմանումը՝ մեկնաբանում իրականացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն, որ պայմանագրում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունն ենթադրվում է կողմերի իրական կամքին համապատասխանող, եթե հակառակը չի ապացուցել շահագրգիռ կողմը:

14. Տառացի մեկնաբանման օգտին կանխավարկածի սահմանումն արդարացված է, սակայն բոլոր իրավիճակների համար առանց բացառությունների կիրառումը խնդրահարույց է: Մասնավորապես կան դեպքեր, երբ պայմանի տառացի նշանակությունն ուղղակի տարակուսանքի տեղիք է տալիս: Այն դեպքերում երբ պայմանի տառացի նշանա-

կությունը չի ենթարկվում ողջամտության թեստի կիրառմանը, ապա դատարանն իրավունքի ունի սեփական նախաձեռնությամբ անցում կատարել ռեալ մեկնաբանման և փորձել հաստատել կողմերի իրական կամքը: Հետևաբար, ապացույցների անբավարարության դեպքում դատարանը կարող է սեփական նախաձեռնությամբ շեղվել պայմանի տառացի նշանակությունից միայն այն դեպքում, եթե այն ակնհայտորեն ողջամիտ չէ:

15. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 2-րդ մասում տրվում են այն աղբյուրները, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ռեալ մեկնաբանման համար: Թվում է, թե առաջին հայացքից ունենք այն օրենսդրական գործիքակազմը, որն անհրաժեշտ և բավարար է կողմերի իրական կամքը բացահայտելու համար: Սակայն՝ դա ընդամենն առաջին հայացքից: Բանն այն է, որ կարծես թե օրենսդիրը չի կարողացել իր կարգավորման նշանակությունը հրամցնել իրավակիրառներին: Մասնավորապես, ներպետական դատական պրակտիկան այս մասով աչքի է ընկնում երկու ակնառու թերությամբ՝

- կիրառելով ռեալ մեկնաբանում՝ դատարանները մեծամասամբ չեն քննարկում այն կոնկրետ հանգամանքը կամ հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել նման որոշում կայացնելու համար,

- եթե նույնիսկ այդ հանգամանքները քննարկվում են, շատ հաճախ դատարանները չեն մատնանշում դրանք:

16. Ներպետական դատական պրակտիկայում տեղ գտած թերությունները և դրանք ծնող պատճառները վեր հանելու և արդյունավետ լուծումներ առաջարկելու համար սույն աշխատանքում արտաքին աղբյուրներն առանձին-առանձին ենթարկվել են վերլուծության: Միևնույն ժամանակ, ներպետական դատական պրակտիկան համադրվել է արտասահմանյան երկրների օրենսդրության և պրակտիկայի, միջազգային օրենսդրության և տեսության հետ: Այս վերլուծությունը հնարավորություն կտա ապահովել պայմանագրի ռեալ մեկնաբանման միասնական դատական պրակտիկա:

17. «Contra proferentem» կանոնի համաձայն՝ պայմանագրի վիճելի պայմանը պետք է մեկնաբանվի նրա դեմ, ով պայմանագրի կնքման պահին այն առաջարկել է, և համապատասխանաբար այն անձի օգտին, ով այն ընդունել է: Այս կանոնը ներպետական իրավունքին և դատական պրակտիկային ծանոթ չէ, քանզի եղել են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ:

18. Մեկնաբանման «Contra proferentem» կանոնն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական նախադրյալներ: Պայմանագրի տեքստի անհստակությունը բերում է կողմերի հարաբերությունների ապակայունացման և կողմերի համար ոչ շահավետ ծախսերի: Որպեսզի դատարանը լուծի վեճը, պետք է բավական ժամանակ ծախսի, իսկ կողմերը պետք է մեծ ջանքեր գործադրեն ապացույցների ձեռքբերման համար: Պայմանագրային իրավունքի նպատակներից մեկն էլ այն է, որ կանխվեն նման ծախսերը, և այդպիսով բարձրանա մասնավոր հարաբերությունների տնտեսական էֆեկտիվությունը:

19. Իրավական առումով «Contra proferentem» կանոնն ունի բավականին խթանող էֆեկտ՝ պայմանագրային կողմի համար ոչ բարենպաստ իրավական հետևանքների առաջացումը: Անբարենպաստ իրավական հետևանքների հետ բախվելու ռիսկը կստիպի պայմանագրային հարաբերությունների մասնակիցներին վերանայել իրենց վարքագիծը, ինչն էլ կբերի պայմանագրային հարաբերությունների կայունացման:

20. «Contra proferentem» կանոնն ի սկզբանե լայնորեն ընդունված է եղել ապահովագրական հարաբերություններում, այնուհետև այն սկսել է կիրառվել միակողմանիորեն պարտադրված պայմանագրային հարաբերություններում: Այս կանոնի միակ բացասական կողմն այն է, որ հնարավոր չէ կիրառել այն, երբ ունենք վիճելի պայմանի հեղինակության խնդիր: Այս նպատակով՝ սահմանվել են մի շարք հաղթահարելի կանխավարկածներ, որոնք կարող են լուծել պայմանի հեղինակության հարցը և համարժեքորեն բաշխել ապացուցման բեռի պարտականությունը:

21. Կարևոր է նաև հստակեցնել «Contra proferentem» կանոնի բնույթը մեկնաբանման համակարգում: Կա տեսակետ, որ այս կանոնը դիտարկվում է որպես մեկնաբանման վերջին միջոց (last resort): Կանոնի շուրջ ձևավորվել է նաև այսպես կոչված ազատական մոտեցում (liberal approach)՝ դիտարկելով այն որպես համընդհանուր կիրառելի՝ առանց որևէ նախապայմանների: Կարծում ենք, որ «Contra proferentem» կանոնը պետք է գործի ավանդական կանոնների կիրառումից հետո, քանզի վերջիններիս պարագայում կողմերի իրական կամքի բացահայտման հնարավորությունը մի քանի անգամ գերազանցում է «Contra proferentem» մեկնաբանմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Դավիթ Օհանյան «Կամքը և կամահայտնությունը պայմանագրի մեկնաբանման համատեքստում» Պետություն և իրավունք, Եր., 2018, N 2 (80), էջեր 54-62:

2. Դավիթ Օհանյան «Պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ տեսությունը» Պետություն և իրավունք, Եր., 2019, N 2-3 (84-85), էջեր 100-108:

3. Դավիթ Օհանյան «Պայմանագրի մեկնաբանման նախադրյալները» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2019, N 112, էջեր 30-36:

4. Դավիթ Օհանյան «Պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2019, N 114, էջեր 26-33:

5. Դավիթ Օհանյան «Պայմանագրի ռեալ մեկնաբանումը» Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, Եր., 2020, N 10, էջեր 177-194:

6. Դավիթ Օհանյան «Պայմանագրի մեկնաբանման <<Contra Proferentem>> կանոնի ծագումը, զարգացումը և կիրառման նախադրյալները» Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, Եր., 2021, N 11, էջեր 132-142:

7. Դավիթ Օհանյան «Պայմանագրի մեկնաբանման «Contra Proferentem» կանոնի կիրառման դաշտն ու սահմանները» Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Եր., 2021, հունվար-փետրվար, 1-2 (259-260), էջեր 72-81:

DAVIT OHANYAN

**CONTEMPORARY ISSUES OF CIVIL LAW
CONTRACT INTERPRETATION**

The increase in the significance of contract contributes to the parallel increase in the role of separate institutes of contract law, such as civil law contract interpretation. The relevance of the institute of civil law contract interpretation is becoming more important in accordance with further development of contractual relationships, conditioned with the transition to market economy. The advent of new types of contracts, the development of contractual relationships, the complexification of the content and texts of civil law contracts, the increase in the tendency of the involvement of trade organizations and private entrepreneurs in contractual relationships make favorable grounds for new disputes, which need to be interpreted.

The contract interpretation is a relatively new institute for the state law. Finally, it was incorporated in the RA Civil Code only in 1998, as a legislative structure, but in 1964, the Civil Code did not comprise any norm referring to it. In order to complete this gap in the national doctrine, this research takes into focus wide-ranging studies of international experience. Specifically, the experience of three leading legal systems, those of Germany, France and England, has been examined. The experience of the legal systems of the USA and the RF has also been taken into consideration. The existing civil legislation of the RA comprises a single article referring to contract interpretation. It is the article 447 of the RA Civil Code, characterized by rather contradictory and discrepant legal application. Based on the following principles of civil law, autonomy of will and freedom of contract, the main purpose of contract interpretation is considered to be revealing the real will of parties of contract. Thus, applying the above mentioned norm, the tendency of state courts of giving preference to the literal interpretation of contract, without taking into account some important circumstances for solving the dispute, is not justified. The reason for such a tendency was the decision of the Court of Cassation, on May 27, 2011. That decision made a hierarchy of interpretation rules, and the base of that hierarchical pyramid was the literal interpretation. That way, the

Court of Cassation implemented a firm policy of preference to literal interpretation of contract, pushing the revelation of the real will of parties into the background. Notably, the reason for such a decision was not the civil law conception of the Court of Cassation, but the content of the article 447 of the RA Civil Code. This decision has been a guideline up-to-date for all the judicial instances of RA. In this respect, wide-ranging studies have been made in this research and appropriate mechanisms have been proposed aimed at finding out more thorough and mutually concessive solutions to disputes.

The interpretation rules existing in the state law and judicial practice are justified in classical contractual formats, where the structure “offer-accept” functions clearly. Still, in certain contractual relationships the traditional rules of contract interpretation are not effective. In this respect, the research takes into focus the rule “Contra proferentem” of interpretation. Particularly, the legal aspect of this rule, its prerequisites and correlation with other interpretation rules, as well as its place in the interpretation system have been examined. Given the fact, that in the state law the majority of contractual disputes arise out of unilaterally forced contacts, the possibility and the format of incorporating the rule “Contra proferentem” in the state law system have been discussed in this research.

ДАВИТ ОГАНЯН

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ТОЛКОВАНИЯ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО ДОГОВОРА

С повышением роли договора повышается также и значимость отдельных институтов договорного права, одним из которых является толкование гражданско-правового договора. По причине дальнейшего развития договорного законодательства и в связи с переходом к рыночной экономике, модернизация института толкования договора становится всё важнее. Возникновение новых видов договоров, развитие договорных отношений, усложнение содержания и текстов гражданско-правовых договоров, рост участия в договорных отношениях коммерческих организаций и индивидуальных предпринимателей вызывают новые споры в договорных отношениях, которые нуждаются в правильном толковании.

Для внутригосударственного права толкование договора - относительно новый институт. В конце концов, как законодательная структура, он был предусмотрен в Гражданском кодексе РА только в 1998 году, а в 1964г. Гражданский кодекс по этому поводу не содержал никакой нормы. Для восполнения этого пробела, имеющегося в отечественной доктрине, в данной работе изучен существующий зарубежный опыт трех ведущих правовых систем: Германии, Франции и Англии. Также был изучен опыт юридических систем США и РФ. Действующее гражданское законодательство Армении содержит только одну статью, посвященную толкованию договора - это статья 447 Гражданского кодекса РА, юридическая практика которой довольно противоречивая и взаимоисключающая.

Исходя из гражданско-правовых принципов волеизъявления и свободы договора, выявление реальной воли сторон договора является основной целью толкования. При применении вышеуказанной нормы склонность внутригосударственных судов к буквальному толкованию договора, без учета важных для разрешения спора обстоятельств, нельзя считать оправданной. Причиной подобной склонности является Решение Кассационного суда РА от 27 мая 2011 года.

Этим решением просто определена иерархия правил толкования, и в основе этой иерархической пирамиды лежит буквальная интерпретация. Таким образом, Кассационный суд установил укоренившуюся политику предпочтения буквального толкования договора, вынося раскрытие реальной воли сторон на последний план. Нужно заметить, что причиной такого решения стало не гражданско-правовое усмотрение Кассационного суда РА, а содержание статьи 447 Гражданского кодекса РА.

До сегодняшнего дня это решение является ориентиром для всех судов Армении. С этой точки зрения, в работе проведено глубокое исследование, предложены механизмы, предусматривающие более всеобъемлющее и компромиссное решение возникшего спора. Существующие во внутригосударственном праве и судебной практике правила толкования достаточно оправдывают себя в классических договорных форматах, где четко действует офертно-акцептная структура.

Однако существуют договорные отношения, в которых традиционные правила толкования договора не столь эффективны. С этой точки зрения в представленной работе было изучено правило интерпретации договора «*Contra proferentem*». В частности, изучен правовой характер этого правила, его предпосылки, соотношение с другими правилами толкования, место правила в системе толкования и т. д. Учитывая, что большинство споров по контракту во внутреннем праве возникает из односторонних договоров, в этой работе обсуждена возможность и формат локализации внутригосударственной правовой системы правила *Contra proferentem*.